16. Ա Ր Ա Զ Ը

Զուր չըն ասում, վեր կնանեքյը մին լուն օղտը շինող ըն։

Սեյգի շենացե Մուլքունց Վանին քշերն ըրազումը տրեսնում ա, վեր բեղեն տեղը մին թև կնանչի յա փսած։

Ինքյը-ինքյը փիս պենու տեղ ա տինում, փիս նշան ա, գյուդում, վեր մթամ թա քյամբախտութուն պիտի ինի ուրան։

Վխելան նհետ եր ա կենում կնգանը՝ Զառնըշանեն նաղլ անում. — Ա՛ կնեգյ, պա ասել չըս, քշերս ըրազըմըս տրեսե բեղես տեղը մին թև կնանչի փսած։

Սա էլ ա մտածմունքու մաչ իյնում։ Կոժը յոր ա օնում, քյինում ճուրը։ Հալա հղենի հըրվանեն կնեգյը ջհում ա, տրան նաղլ ա անում, թա.— Ա՛խճի Գյուլգյազ, պա ասել չը՞ս, մեր մարթը քշերես ըրազըմը տեսալ ա, վեր բեղեն տեղը մին փոնջ կնանչի ար փսած։

Էտ Գյուլգյազը քյինում ա, տրեսնում թուռնեն մին խիլլա խոխեքյ, կնանեքյ հվաքված։ Նահանց նաղլ ա անում, ասում.— Բա ասել չը՞ք, Զառնըշանեն մարթը քշերես ըրազըմը տեսնար, վեր բեղերեն տեղը մին փոնջ կնանչի, մին փոնջ կուտեմնը փսած։ — Կուտեմնըն էլ ինքյն ա իվիլցնում։

Տահանք լոխ ըրմանում ըն, քյնում ամեն մինը ուրանց տանը նաղլ անում, ամեն մինը ուրանը գյորա իվիլցնելավ։

Նաղլ ըն անում, ասում.— Զառնըշանեն մարթը՝ Վանին, ըրազըմը տեսալ ա վեր բեղեն տեղը մին մին փոնջ կնանչի, կընձմնձուվ, խաղաղ, մին փոնջ կուտեմնը, մին փոնջ սողան, մին փոնջ բեդիսկա,

մին փոնջ քյարավուզ, մին փոնջ կյինձ, մին փոնջ քավառ, մին փոնջ նանա, ռեհան, սամիթ, թարխուն փըսած։

Վերչը իտի մինը մինան, մինը մինան խաբար տնելավ, իվիլ-ցընելավ, տուս ա կյամ, վեր տասներկու փոնջ կընանչի փսած ա տրեսալ իրեսեն։

Մեհեթ էլ էտ Վանին հանդան կյալիս տահանց շենացե մին մարթ տրան իրեսեն շատ ա յեշում։

Վանին հըրցնըմ ա.— Խե՞ տի եշում ըս։

Էտ մարթըն էլ տըմանում չի, ասում ա.— Ա՛ մարթ, պա յրես ըսկացալ ըմ, թա իրեսետ տասներկու փոնջ կնանչի յա փսալ, պա հո՞ր ա։

Վանին տրան հսկըցնում ա, ասում.— Ըրազըմըս ըմ տրեսալ, էն էլ վեչ թա տասներկու փոնջ ինա՞ր, էնա ասե մին բոստան ա իլալ իլի՞։

Էտ մարթը մնամ ա ըրմացած, թա էտ մին թև կընանչին հունց ա տասներկու փոնջ տրեռա՞լ։